

Чукческий язык

368

ju-11

Ե Պ Ի Ա Ր Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


«Հաստատում եմ»
Ս. Խ. Հ. Մ. Ֆինժողկամարի
Տեղակալ Ե. Գենկին
25 հունիսի 1933 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՀԱՆՉՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ
№ 351 Կ.

25/6—1933 թ.

368
Խ-11



1933 թ.

11 SEP 2013

92.103

368

11

4

Հաստատմ եմ
Ա. Խ. Հ. Մ. Ֆինժողկոմտի
Տեղակալ ե. Գ. Ե. Կ. Ի. Ն.
25 հունիսի 1933 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սպահովագրական հանձնաժողովների մասին
№ 351 կ. 25 հունիսի 1933 թ.

Շրջանային և գյուղական ապահովագրական հանձնաժողովները կազմակերպվում են ԽՍՀՄ ժողովագրական կոմիսարների Խորհրդի 1933 թ. մարտի 15-ի վորոշմամբ և ԽՍՀՄ ժողկոմխորհի կողմից 1933 թ. մայիսի 28-ին հաստատված՝ պարտադիր կոպարային ապահովագրության կանոնների չիման վրա:

Ա. գյուղական հանձնաժողովներ

237
38

1. Գյուղական ապահովագրական հանձնաժողովները կազմակերպվում են յուրաքանչյուր գյուղխորհրդին կից:

2. Գյուղական ապահովագրական հանձնաժողովները կատարում են հետևյալ պարտականությունները՝
ա) ակտեր են կազմում և վնասների չափը վորոշում աննշան հրդեհներ (յեթե այրված գույքի արժեքը 150 ռ. տվելի չի) կամ ձկնորսական նավերի հետ մանր ավարիա ներ (յեթե վնասի գումարը նույնպես 150 ռ. տվելի չի) տեղի ունենալու դեպքերում. բ) առանձնակի դեպքերում ակտեր են կազմում ապահովագրված գյուղանահանական անառողջությունների անկման մասին, գ) հսկում են, վորպեսզի կոլտնտեսություններն և այլ տնտեսությունները կատարեն հրշեց պահպանության, ինչպես և տարրերային այլ աղետներ կանխելու և նրանց դեմ պայքարելու վերաբերյալ պարտադիր վորոշումները և անտնտեսավարության, պարտադիր վորոշումների խախտումներ

կամ ապահովագրված գույքը վատանգող անկանոնություն հայտնաբերելու գեպքում, միջոցներ են ձեռք առնում վերացնելու այդ անկանոնությունը և յեթե չեն վերացվում, ապա հայտնում են այդ մասին ապահովագրական տեսչին, դ) հետեւում են, վորպեսզի հրչել գումակը սարք ու կարգին լինի և պետական ապահովագրման հատկացումների հաշվին կիրառելիք ձեռնարկումներ են մշակում՝ հրդեհների և այլ տարրերային աղետների դեմ պայքարելու համար գյուղի ունեցած ժիջոցները բարելավելու և ուժեղացնելու, ե) կատարում են ապահովագրական ըրջանային և վերագրա մարտիների այլ հանձնարարությունները, կաղված վնասների լուծարքման (ձևակերպում) և գյուղական ապահովագրական հանձնաժողովների ուրիշ պարտականությունների հետ:

3. Գյուղական ապահովագրական հանձնաժողովները բաղկացած են՝ 1) գյուղխորհրդի նախագահից կամ նրա տեղակալից, 2) գյուղխորհրդի անդամից, վորին նշանակում և գյուղխորհուրդը ըրջանային ապահովագրական տեսչի համաձայնությամբ, 3) գյուղատրնտեսից կամ անասնաբուժից (անասնաբուժակից), յեթե արդպիսները կան գյուղխորհրդին կից և 4) միլիցիոներից, յեթե նա կա տվյալ գյուղում։ Կոլտնտեսության մեջ վնաս տեղի ունենալու գեպքում, հանձնաժողովի կազմի մեջ մտնում է այն կոլտնտեսության վարչության նախագահը կամ այս առթիվ հատկապես լիազորված վարչության անդամը, վորի գույքը վնասվել է։

Գյուղական ապահովագրական հաձնաժողովի նախագահը հանդիսանում է գյուղխորհրդի նախագահն, իսկ նրա բացակայության գեպքում նրա տեղակալը։

4. Գյուղական ապահովագրական հանձնաժողովի նիստեր նրա նախագահը (կամ տեղակալը) հրավիրում են ապահովագրական գույքի վնասվելուն պես, այն գույքը, վորի վերաբերյալ ակտ կազմելը դրված և գյուղական հանձնաժողովի վրա։

Ներկա կանոնադրության Յ-րդ կետում նշված,

Հարցերով, գյուղական հանձնաժողովի նիստերը նախագահը գումարում է ըստ կարիքի։

5. Հանձնաժողովի վճիռներն ուժ ունեն, յեթե դրանց մասնակցել են՝ հանձնաժողովի նախագահը (կամ նրա տեղակալը) և վոչ պակաս քան հանձնաժողովի յերկու անդամը, գյուղխորհրդի այն անդամի անհրաժեշտ մասնակցությունը, վորը հանձնաժողովի կազմի մեջ և մտցրած ապահովագրական տեսչի համաձայնությամբ։

6. Վնասների վերաբերյալ, ակտերը ստորագրում են՝ հանձնաժողովի նախագահը (կամ տեղակալը) և ակտ կազմելիս ներկա յեղած հանձնաժողովի բոլոր անդամներ։ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը, վորը համաձայն չի կայացած վորոշման պետք ե այդ մասին նշի ակտը ստորագրելու ժամանակ։

7. Գյուղական հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները դրվում են գյուղխորհրդի այն անդամի վրա, վորը մտցված է հանձնաժողովի կազմի մեջ ըրջանային ապահովագրական տեսչի համաձայնությամբ։

8. Ապահովագրական գույքի մեջ կամ գյուղատնտեսական անասունների անկումից առաջացած վնասների վերաբերյալ ակտեր կազմելու ժամանակ գյուղական հանձնաժողովները պետք ե զեկավարվեն։

ա) ԽՍՀՄ Ժողկոմիսորհի կողմից 1933 թ. մայիսի 28-ին հաստատված՝ պարտադիր կոռպարային ապահովագրության կանոններով։

բ) ԽՍՀՄ Ֆինանսնամատի կողմից 1933 թ. հունիսի 8/16-ին հաստատված՝ ձեկնորսական նավերի և ձեկնորսական դործիքների պարտադիր կոռպարային ապահովագրության կանոններով։

գ) կրակից և այլ տարրերային աղետներից առաջացած վնասները լուծարքման և հատուցման վերաբերյալ հրահանդույլ այլ և գյուղատնտեսական անասունների վնասների լուծարքման և հատուցման հրահանդույլ նայած թե ապահովագրական վոր տեսակին և վերաբերյալ վնասը և ակտ պետք ե կազմվի։

դ) յերկրային (մարգային) գործկոմի, իսկ այն տեղ, վորակղ այդպիսիք գոյություն չունեն դաշնակից

կում ինքնամվար հանրապետության կառավարության՝
ավագալ տարվա պարտադիր կոպարային ապահովագրու-
թյան վերաբերյալ վորոշմամբ:

ե) այս կանոնադրությամբ՝ ապահովագրական
հանձնաժողովների մասին.

զ) շրջանային ապահովագրական տեսչությունների
և շրջանային ապահովագրական հանձնաժողովների ցու-
ցումներով և կարգադրություններով:

9. Վնասների վերաբերյալ ակտերը գյուղական ա-
պահովագրական հանձնաժողովները կազմելուն պես
ուղարկում են շրջանային ապահովագրական տեսչու-
թյուն (ապահովագրական տեսչին) ստուգելու և շրջա-
նային ապահովագրական հանձնաժողովի հաստատու-
թյանը ներկայացնելու համար:

Բ. Շրջանային հանձնաժողովներ

10. Մշտական շրջանային ապահովագրական հանձ-
նաժողովներ կազմակերպում են յուրաքանչյուր շրջա-
նային գործադիր կոմիտեյին և քաղաքային խորհրդին
կից, ընդլուրում վերջիններին կից ապահովագրական
հանձնաժողովներ կազմակերպվում են այն գեպքում,
ինթե Քաղխորհուրդն իրեն յենթակա գյուղխորհուրդ-
ներ ունի:

11. Շրջանային ապահովագրական հանձնաժողով-
ների կազմի մեջ մտնում են՝

1) Շրջգործկոմի (քաղխորհրդի) նախագահի տեղա-
կալը, 2) Հողբաժնի վարիչը, 3) շրջանային ապահո-
վագրական տեսուչը, 4) գյուղատնտեսական մթերզում-
ների կոմիտեյի շրջանային լիրագորը, 5) միլիցիայի
շրջանային վարչության պետը և 6) Մ.Պ.Ք.Վ. ներկա-
յացութիչը:

Հանձնաժողովի նախագահ հանդիսանում է Շրջ-
գործկոմի (քաղխորհրդի) նախագահի տեղակալը:

Հանձնաժողովի քարտուղարի և նիստերում մշտա-
կան գեկուցողի պարտականությունները դրվում են ա-
պահովագրական տեսչի վրա:

12. Շրջանային ապահովագրական տեսչություն-
ների ունեն հետեւյալ պարտականությունները՝

ա) պարտագիր կոպարային ապահովագրության
կարգով, տվյալ շրջանի համար սահմանված լիմիտների
սահմաններում և ապահովագրական կանոններով վո-
րոշված ժամկետներում վնասները լուծարքման յեն-
թարկելը.

բ) Կետապի վերադաս մարմինների առանձին հանձ-
նարարություններով «ա» կետում նշված լիմիտներից
դուրս վնասներ լուծարքման յենթարկելը:

գ) Վնասների վերաբերյալ ակտեր հաստատելը և
ապահովագրական վարձատրության հաշվարկելն ինչ-
պես այն վնասների նկատմամբ, վորոնք լուծարքվել են
շրջանային հանձնաժողովի իր կողմից, նույնպես և
գյուղական ապահովագրական հանձնաժողովների կող-
մից լուծարքված վնասների նկատմամբ:

Լիմիտից բարձր (տես կետ «դ») վնասների վերա-
բերյալ շրջանային ապահովագրական հանձնաժողովն իր
յեղբակացությունները տալիս են վնասները ներկայաց-
նում և ապահովագրական տեսչի միջոցով ապահովա-
գրական վերադաս մարմինների հաստատությանը:

դ) ապահովագրումը դադարեցնելու վերաբերյալ
հարցերի քննարկումն այն գեպքերում, յերբ կոլտնտե-
սությունները, կոլտնտեսականները և մենատնտեսները
խախտում են հրշեց պահպանության, գյուղատնտեսա-
կան անասուններին կեր տալու, փնամելու և ոգտագոր-
ծելու վերաբերյալ սահմանված կանոններն, այլ և
անտնտեսավարության, վնասարարության և այլն հայ-
տարերելու գեպքում:

յե) «դ» կետում նշված գեպքերում դադարեցված
անտնտեսավարության, վնասարարության և այլ հայ-
տերի քննարկումը, յեթե կ'պարզվի, վոր ապահովա-
գրության դադարեցման պատճառները վերացված են:

զ) Քննչական մարմիններին նյութերը հարդորգելն
բայ բոլոր գեպքերի մասին, յերբ հանձնաժողովը կպար-
զի, վոր ապահովագրված գույքը փչացել կամ վնասվել
ե ակնհայտ անտնտեսավարության կամ գեպի այն վնա-
սարար վերաբերմունք ցույց տալու հետևանքով՝ մեղա-

վորներին պատասխանառվության յենթարկելու համար:

ե) դասակարգային վրեժինդրության փաստերի ստուգումն ու վորոշումն այն դեպքերում, յերբ փչացել կամ վնասվել ե այն կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների գույքը, վորոնքակտիվ պայքար են մղում կուլակության և հակախորհրդային այլ տարրերի դեմ:

ը) ըրջանում պարտադիր կոպարային ապահովագրության կիրառման վրա հսկելը.

թ) պետական ապահովագրության գծով հրդեհների, հեղեղումների և գյուղատնտեսական անասունների մահացության դեմ պայքարել և միջոցառումների համար հատկացվող գումարների բաշխման և ծախսման պլաններն կազմելն, այլ և այդ գումարների ըստ իրենց նպատակին ծախսելու և նշված ձեռնարկումների ճիշտ իրագործման վրա հսկելը:

ժ) կոլտնտեսություններին անասունները լավ պահպահնելու և խնամելու, ինչպես և կոլտնտեսությունների հակահրդեհային սարքավորման և բարեկարգության համար պարտադիր կոպարային վճարումներից զեղջեր անելն, ընդվորում ըրջանային ապահովագրական հանձնաժողովներն անհրաժեշտ դեպքում պետք ե զննեն այդ գույքը, վորի նկատմամբ յենթարկվում են հիշյալ զեղջն անել՝ այդ գույքի փաստական դրությանն ու պահպանության պայմանները ստուգելու համար:

ի) գյուղական ապահովագրական հանձնաժողովների և գյուղառնուրդների պետական ապահովագրության գծով ունեցած գործողությունների դեմ տրված գանդատների քննարկումը:

13. Վնասների լուծարքն, այլ և Յ-րդ Հոդ. «ի» կետում նշված դեպքերում, ապահովագրված գույքի վըն նությունը ըրջանային ապահովագրական հանձնաժողովները կատարում են իրենց լրիվ կազմով, կամ վերջինների հանձնարությամբ հանձնաժողովի մի քանի անդամի կազմով, բայց բոլոր դեպքերում ել ապահովագրական տեսչի պետական ապահովագրական մասնակցությամբ:

14. Տեղերը մեկնելիս ըրջանային ապահովագրական

հանձնաժողովներն իրենց աշխատանքներին մասնակից են անում գյուղական ապահովագրական հանձնաժողովներին:

15. Շրջանային հանձնաժողովի նիստերը պետք ե դումարվեն վոչ ուշ, քան դեկտեմբերի անգամ այն հաշվով, վորպեսզի ապահովագրական կանոններով սահմանված ժամկետներում իրենց լուծումը ստանան հանձնաժողովի իրավավառությանը պատկանող հարցերը: Նիստերի ժամանակը վորոշում է հանձնաժողովի նախագահը:

16. Հանձնաժողովի նիստերը կայացած են համարվում այն դեպքում, յեթե ներկա յեն գտնվում հանձնաժողովի նախագահը և վոչ պակաս քան հանձնաժողովի յերկու անդամը, նույն թվում և ապահովագրական տեսուչը:

Յուրաքանչյուր նիստում արձանագրություն ե կազմվում, վորի մեջ նշվում ե նիստի ժամանակը, ով ե մասնակցել, ինչ հարցեր են քննվել և հանձնաժողովի կայացրած վճիռը՝ համառոտ:

Արձանագրությունը ստորագրում են նախագահը և հանձնաժողովի ներկա գտնվող բոլոր անդամները:

17. Շրջանային ապահովագրական տեսուչը, յեթե համաձայն չի ապահովագրական հանձնաժողովի վճռին (յերբ այդպիսին հակասում ե պետապահովագրության գոյությունը ունեցող կանոններին և հահանգներին) պարտավոր ե բողոքարկել այն և դադարեցնել վնասների վճարումը (յեթե այդ դրանց լուծարքմանն ե վերաբերում):

Հանձնաժողովի անդամը յեթե համաձայն չի ընդունիած վորոշման, պետք ե այդ մասին նշի տվյալ նիստի արձանագրությունը ստորագրելիս և վոչ ուշ, քան հաջորդ որը ներկայացնի հանձնաժողովին իր առանձին կարծիքը՝ գրավոր: Այս դեպքում նախագահից ե կախված՝ ընդունված վճիռը, չնայած առանձին կարծիքին, ե կատար ածեւ թե հարցը նորից քննության դնելը: Բոլոր դեպքերում ել այդ առանձին կարծիքի մասին տեղեկացմում են Պետակի վերադաս մարմիններին:

18. Շրջանային ապահովագրական հանձնաժողով-

ներն իրենց աշխատանքների ընթացքում պետք է զեկառվարվեն՝

ա) ԽՍՀՄ ժողկոմիսորհի կողմից 1933 թ. մայիսի 28-ի հաստատված՝ պարտադիր կոպարային ապահովագրության կանոններով.

բ) ԽՍՀՄ ֆինժողկոմատի կողմից 1933 թ. հունիսի 8/16-ին հաստատված ձկնորսական նավերի և ձկնորսության գործիքների պարտադիր ապահովագրության կանոններով:

գ) ապահովագրված գույքի՝ կրակից և տարրերային այլ աղետներից ապահովագրելու, գյուղատնտեսական անասուններն ապահովագրելու, գյուղատնտեսական մշակույթների ցանքերը 1) կարկտից, 2) փտումից և ցրտահարումից, 3) յերաշտից և անբերիությունից ապահովագրելու վնասների լուծարքման և հատուցման վերաբերյալ հաջանգներով:

դ) Միութենական կառավարության, ինչպես և դաշնակից ու ինքնավար հանրապետությունների և յերկրային, մարզային գործկոմների՝ տվյալ տարվա պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ վորոշումներով՝

ե) Պետապի վերադաս մարմինների դիրեկտիվներով, կարգադրություններով և ցուցմունքներով:

զ) այս կանոնագրությամբ՝ ապահովագրական հանձնաժողովների մասին.


Ծանոթություն. — Հանձնաժողովի անդամներին պետական ապահովագրության վերաբերյալ որենսգրությանն և Պետապի համապատասխան դիրեկտիվներին ծանոթացնելը, ինչպես և հանձնաժողովին բոլոր անհրաժեշտ նյութեր (հրահանդեր, կանոններ և այլն) մատակարարելու պարտականությունը գրվում է ըրջանային ապահովագրական տեսչի վրա:

Նույն պարտականություններ նա ունի և գյուղական ապահովագրական հանձնաժողովների վերաբերմամբ:

Ապահովագրական հանձնաժողովները պարբերաբար են տալիս իրենց կատարած աշխատանքների մատին տեղական զեկավար մարմիններին և Պետապի վերագրու մարմիններին:

Տ. Լուծարքային ակտերը ճիշտ կազմելու և հաստատելու համար պատասխանատու յեն հանձնաժողովի բոլոր անդամներն, ընդվորում կեղծ կամ իրենց մեջ սույն տեղեկություններ պարունակող ակտեր կազմելու համար մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

Ե. Հանձնաժողովի այն անդամները, վորոնք նիստեր չեն հաճախում ու խույս են տալիս իրենց տրված հանձնաժարությունները կատարելուց, պատասխանագրության են կանչվում վորպես ըստ որենքի իրենց վրա գրված պարտականությունները կատարելուց խուսափողներ:





ՀՀ Ազգային գրադարան

43.765